

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համալսարանի ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է համալսարանի ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման, պետական և ներքուհական կրթաթոշակների տրամադրման կարգը և պայմանները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» օրենքները, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի «ՀՀ բուհերում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 8-ի թիվ 1986-Ն և 2005թ. սեպտեմբերի 15-ի թիվ 2114-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1183-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2006 թ. հուլիսի 27-ի N 1183-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին 2021 թ. հոկտեմբերի 28-ի N 1752-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1290-Ն որոշմամբ հաստատված ՀԱՊՀ կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

3. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են համալսարանի (*այդ թվում՝ նաև մասնաճյուղերի*) բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով *առկա և հեռակա* ուսուցման համակարգերում սովորող (*բացառությամբ* օտարերկրյա քաղաքացիների ուսուցման բաժանմունքի) ուսանողների վրա:

II. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Ուսանողի ուսման վճարը, ըստ ուսման առաջադիմության արդյունքների, ուսանողական նպաստի ձևով *լրիվ* կամ *մասնակիորեն* փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համալսարանին հատկացված տեղերի ու ֆինանսական միջոցների, *համալսարանի ֆինանսական միջոցների*, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

4.1. Տվյալ ուսումնական տարվա ընդունելության համար համալսարանի՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից հատկացված ուսման վճարի լրիվ (100%) փոխհատուցման ուսանողական նպաստների (տեղերի) քանակը անփոփոխ է և տեղափոխվում է կուրսից կուրս:

4.2. Տարբեր մասնագիտությունների հիման վրա նոր մասնագիտության (մասնագիտացման) խումբ (խմբեր) կամ նույն մասնագիտության հիման վրա նոր մասնագիտացման խումբ (խմբեր) ձևավորելիս խմբի ուսման վճարի լրիվ (100%) փոխհատուցմամբ տեղերը հատկացվում են նախորդ մասնագիտություններին/մասնագիտությանն ամրագրված տեղերից տեղափոխվող և այդ տեղերին հավակնող ուսանողների համամասանությամբ: Հատկացված տեղերի հաշվարկային արդյունքն ամբողջացվում է (ամենամոտ ամբողջ թվով):

5. Պետությունը նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին համապատասխան՝

1) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով, ընդ որում.

ա. առաջին կուրսում նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում ընդունված ուսանողներին,

բ. հաջորդ կուրսերում նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով: Սույն պարբերության պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած սովորողների վրա՝ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում,

գ. ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս

հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին: Թափուր տեղեր առաջանալու դեպքում նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցումը կարող է տրամադրվել տվյալ մասնագիտության շրջանակում այլ կրթական ծրագրերի ուսանողների՝ սույն պարբերությամբ սահմանված կարգով.

2) Օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

ա. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձանց,

բ. 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխա ճանաչված անձանց, ֆունկցիոնալության ծանր և խորը, իսկ երեխաների դեպքում նաև միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձանց՝ համաձայն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ. ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

դ. զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակներին, ծնողներին, ամուսնուն (կնոջը)՝ համաձայն Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

3) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին, ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կարող են սահմանվել նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողների ուսման վճարի փոխհատուցման այլ պայմաններ:

6. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում, ըստ առաջադիմության, տրամադրում է՝

1) ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին՝ սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերին համապատասխան.

2) սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ուսանողներին՝ սույն կարգի 10-րդ և 11-րդ կետերին համապատասխան.

3) մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին՝ սույն կարգի 11-րդ կետին համապատասխան.

4) առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող՝ երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին՝ սույն կարգի 11-րդ կետին համապատասխան:

7. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին՝

ա) մինչև 5,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 50 տոկոսի չափով,

բ) 5,01 - 10,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 60 տոկոսի չափով,

գ) 10,01 – 15,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 70 տոկոսի չափով,

դ) 15,01 – 20,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 80 տոկոսի չափով,

ե) 20,01-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 90 տոկոսի չափով:

8. Սույն կանոնակարգի 7-րդ կետով սահմանված փոխհատուցումը տրամադրվում է՝

1) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով կրթական աստիճանում՝

ա. առաջին կուրսում՝ համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված

ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա,

բ. հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքներով միջին որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) առավելագույն արժեքի առնվազն 60 տոկոսի շեմը հաղթահարելու դեպքում.

2) մագիստրոսի կրթական աստիճանում՝ առաջին կուրսում նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսի, իսկ հաջորդ կուրսերում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 70 տոկոսի շեմն ապահովելու դեպքում:

9. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը

համալսարանին է ներկայացնում յուրաքանչյուր կիսամյակ՝ սույն կարգի 16-րդ կետում սահմանված ժամկետներում:

10. Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերում հաշվառված և վերջին 5 տարում մշտապես բնակվող և տվյալ համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտած ուսանողներին:

11. Սույն կանոնակարգի 6-րդ կետի 2-4-րդ ենթակետերով սահմանված ուսանողների խմբերին փոխհատուցում տրամադրվում է՝

1) առաջին կուրս ընդունված ուսանողներին՝

ա. բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով՝ համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով,

բ. մագիստրոսի կրթական աստիճանի դեպքում՝ նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսը հաղթահարած ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով.

2) հաջորդ կուրսերում՝

ա. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 60-70 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով,

բ. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 71-79 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 60 տոկոսի չափով,

գ. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 80 տոկոս և բարձր ՄՈԳ ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 70 տոկոսի չափով:

12. Սույն կանոնակարգի 5-րդ կետի 2-րդ և 6-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով սահմանված ուսանողների խմբերին ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են առաջին կուրսից, ինչպես նաև ուսումնառության ընթացքում համապատասխան կարգավիճակը ձեռք բերելու պահից:

13. Սույն կանոնակարգի 5-րդ կետի 2-րդ և 6-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով սահմանված ուսանողների խմբերին ուսանողական նպաստի փոխհատուցում չի տրվում՝ ուսումնառության ընթացքում համապատասխան կարգավիճակը կորցնելու պահից:

14. Սույն կանոնակարգով սահմանված ուսման վճարի մասնակի փոխհատուցման մի քանի արտոնության հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն

մեկից, որի դեպքում կիրառվում է ուսման վճարի մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

15. Համալսարանում մեկից ավելի մասնագիտություններով (կրթական ծրագրերով) նույն կրթական աստիճանով զուգահեռ ուսանելու դեպքում պետության կողմից նպաստի ձևով լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրվում է մեկ մասնագիտության (կրթական ծրագրի) համար:

16. Համալսարանում պետության, ինչպես նաև համալսարանի կողմից ուսման վճարի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են՝

1) առկա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքներին հաջորդող չորս շաբաթների ընթացքում.

2) հեռակա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

17. Հարգելի պատճառով (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում) ուսումնառությունն ընդհատած ուսանողը ուսումնառությունը վերականգնելիս պահպանում է ուսանողական նպաստ ստանալու՝ նախկինում ունեցած իրավունքը: Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատման հրամանում:

18. Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում բուհի կողմից տրամադրվող ուսանողական նպաստը կարող է փոփոխվել:

19. Համալսարանը «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն, վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին, ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն 7 տոկոսի չափով, իր միջոցների հաշվին, հիմք ընդունելով ուսանողի բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը (սահմանված կարգով վավերացված համապատասխան փաստաթղթերի ներկայացման պարագայում), ուսման վճարը ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում է ըստ սույն կանոնակարգի անբաժանելի մասը հանդիսացող հավելված 1-ում բերված տարակարգերի և չափերի:

20. Վերականգնված, միջին մասնագիտական կրթական ծրագրով (քոլեջ) ուսումնառության անցած և բակալավրական ուսուցման ծրագիր տեղափոխված, այլ բուհերից, համալսարանի այլ մասնագիտություններից, կամ հեռակա ուսուցման համակարգից առկա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողները, ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել

համալսարանում (տվյալ մասնագիտությամբ), առկա ուսուցման համակարգերում մեկ ուսումնական տարի սովորելուց հետո, իսկ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ առկա և հեռակա ուսուցման համակարգում մեկ կիսամյակ սովորելուց հետո:

21. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել միջին որակական գնահատականի (ՄՈԳ) 60 տոկոսը հաղթահարելու դեպքում: Անհարգելի պատճառով (անբավարար գնահատական, չստուգված) ստանալու, կամ անհարգելի պատճառով քննությանը/ստուգարքին չներկայանալու դեպքում ակադեմիական պարտքերի մարման շրջանում քննությունները կամ ստուգարքները հանձնելու դեպքում ուսանողները համալսարանի կողմից ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից չեն օգտվում:

22. Բակալավրատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող առաջին կուրսի ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից, բացառությամբ սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողների, ովքեր ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել ուսումնառության առաջին կիսամյակից:

23. Սույն կանոնակարգի 5-րդ կետի 1 ենթակետում նշված ուսանողների համար մրցույթը կազմակերպվում է մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը, նախորդող ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի համար սահմանված ժամանակահատվածում քննությունների և ստուգարքների արդյունքում ցուցաբերած առաջադիմության միջին ցուցանիշի հիման վրա (հաշվի չառնելով ակադեմիական պարտքերի մարման շրջանի արդյունքները): Միջին թվաբանական ցուցանիշը հաշվարկվում է համալսարանում գործող գիտելիքների գնահատման հարյուր միավորանոց սանդղակի կիրառմամբ՝ հարյուրերորդական միավորի ճշգրտությամբ: Հավասար ցուցանիշների դեպքում միավորները հաշվարկվում են առանց կլորացման:

Ըստ առաջադիմության միջին ցուցանիշի նվազման՝ ձևավորվում է տվյալ կուրսի տվյալ մասնագիտությամբ շրջափոխմանը հավակնող ուսանողների ցուցակը:

24. Սույն կանոնակարգի 23-րդ կետում նշված ուսանողների ցուցակը ինստիտուտի տնօրենի/ֆակուլտետի ղեկանի կողմից ներկայացվում է ինստիտուտի/ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի (մասնաճյուղում՝ մասնաճյուղի մանդատային հանձնաժողովի) քննարկմանը:

Մանդատային հանձնաժողովը, ըստ տվյալ կուրսի տվյալ մասնագիտությանը հատկացված նպաստների թվաքանակի, իրականացնում է մրցույթ և կազմում ուսման

վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը, որը պարտադիր վավերացվում է մանդատային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Ցուցակի կազմման համար ձևակերպվում է արձանագրություն (2 օրինակից), որում պարտադիր կարգով գրանցվում են մանդատային հանձնաժողովի անդամների կողմից արտահայտված կարծիքները և հնարավոր վերապահումները: Արձանագրությունը ստորագրվում է մանդատային հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

25. Սույն կանոնակարգի 23 կետում նշված ցուցակները և արձանագրությունները մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը համապատասխան ինստիտուտի տնօրենի/ֆակուլտետի ղեկանի (մասնճյուղի տնօրենի) կողմից ներկայացվում են համալսարանի մանդատային հանձնաժողովի հաստատմանը:

Համալսարանի մանդատային հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակները հրամանագրվում են համալսարանի ռեկտորի կողմից և հասցվում ուսանողներին ի գիտություն՝ հրապարակման ճանապարհով (փակցվում են յուրաքանչյուր ինստիտուտի/ֆակուլտետի հրամանների և հայտարարությունների ցուցատախտակին): Հրամանում պարտադիր նշվում է նպաստի տրման ժամկետը՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը: Ցուցակների վերաբերյալ բողոք-դիմումները կարող են ներկայացվել համալսարանի մանդատային հանձնաժողովին ցուցակների հրապարակումից հետո՝ եռօրյա ժամկետում:

26. Սույն կանոնակարգի թիվ 23 կետում նշված ցուցակներում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև ցուցակների կազմման ընթացակարգի այլ խախտումներ հայտնաբերելիս համալսարանի մանդատային հանձնաժողովն իրավասու է տվյալ մասնագիտության նպաստառուների ցուցակը ետ վերադարձնել տվյալ ֆակուլտետ (մասնաճյուղ)՝ նոր մրցույթի կազմակերպման պահանջով: Անճշտություններ, վրիպումներ, սխալներ և ընթացակարգային խախտումներ թույլ տված անձիք ենթակա են կարգապահական տույժերի, որոնք ձևակերպվում են համալսարանի ռեկտորի հրամանով:

27. Ռեկտորի կողմից նպաստառու ուսանողների ցուցակի հրամանագրումից հետո, եթե տեղի է ունեցել ուսանողի կարգավիճակի փոփոխություն (անցում վճարովի համակարգից անվճար համակարգ կամ հակառակը), հաջորդ երկու շաբաթների ընթացքում համապատասխան նշում է կատարվում Համալսարանի և ուսանողի միջև ուսուցման պայմանների վերաբերյալ կնքված պայմանագրում:

28. Նպաստառու ուսանողների վերաբերյալ բոլոր հրամանների պատճենները՝ կից գրությամբ, հղվում են ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

III. ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

29. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է՝ ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար (արվեստի բնագավառի բուհերում՝ նաև մասնագիտական մրցույթ-ստուգատեսների հաղթողներին), ինչպես նաև նպատակային ուսուցմամբ սովորող սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին:

30. Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝

1) մասնակցությունը ֆակուլտետի և բուհի ուսանողական, հասարակական աշխատանքներին.

2) զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակած աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային

լրատվության միջոցներում).

3) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին,

ուսանողական գիտական նստաշրջաններին.

4) այլ հասարակական և ստեղծագործական նախաձեռնություններ՝ բուհի հայեցողությամբ:

31. Ուսանողի պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրա կողմից համալսարանի ներքին կարգապահության կանոնների խստիվ պահպանմամբ, և նշված կանոնների խախտման առիթով ռեկտորի, պրոռեկտորի կամ ինստիտուտի տնօրենի/ֆակուլտետի ղեկանի կողմից տրված նկատողության հրամանները հիմք են պետական կրթաթոշակ չհատկացնելու համար:

32. Համալսարանում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ համալսարանում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով:

Համալսարանի առկա ուսուցման համակարգում սովորող առաջին և երկրորդ խմբի հաշմանդամության կարգ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող ուսանողներին, ինչպես նաև զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:

33. Համալսարանի պետական կրթաթոշակների թվաքանակը և չափը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ յուրաքանչյուր տարի տվյալ տարվա

համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համալսարանին հատկացված միջոցների սահմաններում:

34. Պետական կրթաթոշակների հատկացման և հրամանագրման գործընթացը կազմակերպվում է սույն կանոնակարգի 25-րդ կետում նշված մանդատային հանձնաժողովների միջոցով և համապատասխան կարգով: Մրցույթի անցկացումից հետո տվյալ մասնագիտությամբ ազատ պետական կրթաթոշակներ առաջանալու դեպքում դրանք կարող են վերաբաշխվել ֆակուլտետի մյուս մասնագիտությունների վրա:

35. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին սույն կանոնակարգի 29-31-րդ կետերում նշված պայմանների պահպանման պարագայում պետական կրթաթոշակի հատկացումը վերահաստատվում է: Թվարկված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից:

36. Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են տվյալ մասնագիտության այլ ուսանողների:

37. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդ, առողջական վիճակ, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ) ուսումնառությունն ընդհատած ուսանողի համար վերականգնվելիս պահպանվում է նախկինում նրա ունեցած պետական կրթաթոշակ ստանալու իրավունքը:

Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատումը ձևակերպող հրամանում:

Ուսման վճարի մասնակի փոխհատուցման ենթակա ուսանողների տարակարգերը և ուսման վճարի զեղչման չափը

Կետ 9	Ենթա կետ	Տարակարգեր	Զեղչման չափը, %
	1	Մոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին	30
	2	18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը	50
	3	23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին	50
	4	Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին	50
	5	Երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին	30
	6	1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին	30
	7	Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին	30
	8	Մոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին	20
	9	Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, ովքեր ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0,1 միավոր տարբերությամբ	50
	10	ՀԱՊՀ-ում վճարովի ուսուցման համակարգում սովորող 2 և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներից մեկին	20
	11	Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին	30
	12	Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված չորս և ավելի կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին	35
	13	Համալսարանում աշխատող ուսանողներին, ովքեր ունեն 3-5 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ	30
	14	Համալսարանում աշխատող ուսանողներին, ովքեր ունեն 5 տարուց ավելի անընդմեջ աշխատանքային ստաժ	50
	15	Համալսարանի հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատողների երեխա (թոռներ) ուսանողներին, ովքեր ունեն 5-15 տարի անընդմեջ աշխատանքային ստաժ	50
	16	Համալսարանի հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատողների երեխա (թոռներ) ուսանողներին, ովքեր ունեն 15 տարուց ավելի անընդմեջ աշխատանքային ստաժ	60
	17	Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ այլ տարակարգերի ուսանողներին	20 - 50